ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԴԱՐՁՅԱԼ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՀԱՂԲԱՏԻ ՎԱՆՔՈՒՄ ԴՏՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բանասիր. գիտ. դոկտոր Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Սայաթ-Նովայի սեփական ձեռքով գրված խաղերի դավթարն ու ծիսական մատյանը՝ իրենց մեծարժեք հիշատակարաններով, նրա ստեղծագործություններում առկա առանձին թափանցիկ արտահայտություններն ու անդրադարձումները, նրա ապրած ու գործած տարիներին ու վայրերին վերաբերող պատմական վավերագրերը թեպետև բավականաչափ ուղղակի և անուղղակի տվյալներ են տրամադրում հետազոտողներին, բայց բազմաթիվ խնդիրներ, նրա կյանքի ամբողջ ժամանակահատվածներ շարունակում են մնալ մշուշի մեջ։

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1969 թ. № 3-ում, առկա սկզբնաղբյուրների ընձեռած տվյալների հիման վրա քննության առնելով Սայաթ-Նովայի կենսագրության հաղբատյան առեղծվածը, մենք նպատակ ունեինք դեռ ընդհանուր գծերով վերականգնել բանաստեղծի կյանքի վերջին երեսուն տարիների ժամանակագրությունը և ուսումնասիրողների ուշադրությունը դարձնել այն հարցերի վրա, որոնց վերջնական լուծումը պահանջում է տևական ժամանակ ու ջանքեր։

Նույն հանդեսի 1971 թ. № 3-ում մեր դրույթների դեմ հանդես է եկել Ն. Գրիգորյանը՝ «Սայաթ-Նովայի կյանքի հաղբատյան շրջանի մասին» բանավիճային հոդվածով, ուր անտեսելով հանրահայտ փաստերը կամ միտումնավոր ձևով վերարտադրելով դրանք, գրում է. «Մասնագետներից ոչ մեկը անվերապահորեն չի պնդել Սայաթ-Նովայի հաղբատաբնակ լինելը։ Ախվերդյանն անգամ, որ այդ տեսության հիմնադիրն է, թեականորեն է խոսում»։ «Սայաթ-Նովայի կյանքի հաղբատյան շրջանը... ոչ թե իսկություն է, այլ խիստ հավանական, ճշմարտությանը մոտեցող ենթադրություն»։ Պ. Հակոբյանը «ամենևին հաշվի չնստելով վերոհիշյալի հետ, Սայաթ-Նովային նախ անվերապահ հաղբատաբնակ է համարում և ապա ձեռնամուխ լինում դրա հերքմանը» (էջ 95)։

Իրականում Ախվերդյանը հաստատորեն գրել է, թե Սայաթ-Նովան «իր զավակներու Թիֆլիզում թողած՝ գնում, հեռանում է Հաղպատու Սուրբ-Նշան վանքն... ձեռնադրվում է աբեղա... Դժվար թե նա մտած ըլի վանքն իր կնոջ մահից առաջ... որ է 1768... թե մե երկու տարի էլ ետ դնենք ու ընդունենք 1770-ն, հայնժամ մեր երգիչն կրոնավորելիս էլել պիտի ըլի 58 տարեկան»[1], իսկ Մ. Հասրաթյանի կարծիքով, «կնոջ մահից մի քանի տարի հետո, երևի

---

[1] «Սայաթ-Նովա», լուս ցցած աշխատասիրությենով Գեորգյա Ախվերդյան, Մոսկվա, 1852, էջ ԺԸ—ԺԹ։

1770-ական թթ. Սայաթ-Նովա—Տեր-Ստեփաննոս քահանային վանականի (վարդապետի) աստիճան ենշնորհում և փոխադրում իր հայրենի Հաղպատի վանքը... ավելի հավանական է, որ Սայաթ-Նովան վարդապետ ձեռնադրված լինի 1775 թվականին՝ կնոջ մահից յոթ տարի հետո։ Հաղպատում Սայաթ-Նովան լուսարարի պաշտոն է ստանձնում...»[2]։

Ինչպես տեսնում ենք և՛ Ախվերդյանը, և՛ Հասրաթյանը որևէ կասկած չունեն Սայաթ-Նովայի՝ Հաղբատում լինելու մասին, նրանց տարակարծությունը վերաբերում է թվականին. 1770, թե՞ 1775։ Այս կապակցությամբ հայ գրականության դպրոցական դասագրքում ասված է. «Կնոջ վախճանվելուց հետո (1768 թվականին) Սայաթ-Նովան ստիպված է լինում գնալ Հաղպատի վանքը և դառնալ կրոնավոր»[3]։

Բայց կարո՞ղ էր Սայաթ-Նովան 1768, 1770 կամ 1775 թթ. Հաղբատում լինել. այս խնդիրն է, որ մեր նախորդներին չի՛ հետաքրքրել։

Հիմք ունենալով Հովհաննես Ղրիմեցու «Պատմութիւն հնչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին» աշխատությունը, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կոնդակները, Հաղբատի պատմական անցյալին լավատեղյակ Ռոստոմ Բեկ Երզնկյանցի գիրքը, ինչպես և բազմաթիվ ուրիշ նյութեր, մենք գրել ենք, որ նպիր Շահի մահվանից հետո մինչև 1777 թ., շուրջ երեսուն տարի, լեզգիների պարբերական արշավանքների, սրածությունների ու գերեվարության հետևանքով Հաղբատի վանքը ավեր ու անմարդաբնակ է եղել, հետևաբար Սայաթ-Նովան Հաղբատ կարող էր փոխադրվել միայն դրանից հետո, բայց ո՛չ 1777 թ. առաջ։

Ն. Գրիգորյանը տարօրինակ պատճառաբանություններ է մեջտեղ բերում. «Չի կարելի չհավատալ Ղրիմեցուն, և նա իրոք նշում է, որ Հաղբատի երեք առաջնորդները՝ Գրիգորը, Զաքարիան և Ռեթեոսը շուրջ 30 տարի, հարկազրված, Հաղբատից տեղափոխվել էին ու նստում էին Թիֆլիսում։ Այո՛, բայց ե՞րբ՝ 1747—1777 թթ.։ Իսկ մեր ինչի՞ն են պետք այս թվականները։ Չէ՞ որ ըստ ավանդության Սայաթ-Նովան Հաղբատում եղել է դրանից հետո՝ 1770—1795 թթ. միջև» (էջ 96)։

Կարդում ես ու զարմանում. մի՞թե Ն. Գրիգորյանը չի զգում, որ 1770 թվականը 1777-ից հետո չի գալիս, իսկ 1747—1777 թթ. մեզ անհրաժեշտ են նրա համար, որ իմանանք, թե ինչ վիճակում է եղել Հաղբատի վանքը և անտեղի չպնդենք, որ Սայաթ-Նովան Հաղբատ է փոխադրվել 1768, 1770 կամ 1775 թթ.։

Ն. Գրիգորյանը, հակառակ հանրահայտ փաստերին, չի ուզում ընդունել նաև, որ 1747—1777 թթ. Հաղբատավանքն ամայի ու անմարդաբնակ է եղել ու մի էջ առաջ Հովհաննես Ղրիմեցու հաղորդած տվյալների արժանահավատության մասին ասած խոսքերը («Չի կարելի չհավատալ Ղրիմեցուն...») մոռանալով, գրում է. «...իսկապես ճշմարտությո՞ւն է դա, թե մեր պատմիչին և աշխարհի բոլոր պատմիչներին հատուկ չափազանցություն կամ գույների թանձրացում» (էջ 97)։ Բայց ի՞նչ իրավունքով մենք չափազանցություն պիտի

2 «Սայաթ-Նովա», հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյան, Երևան, 1963, էջ XXXIII—XXXIV (այսուհետև՝ Մ. Հասրաթյան)։

3 Մ. Մ. Մկրյան, Հայ գրականություն, դասագիրք միջնակարգ դպրոցի VIII դասարանի համար, Երևան, 1970, էջ 124։

համարենք Ղրիմեցու «Թողու զմենաստանս ամայի և զնայ հանդերձ միաբանիւ ուխտիս ի Տփղիս Քաղաք»[4] շատ որոշակի ասած խոսքերը և Շ. Գրիգորյանի նման պնդենք, թե «հնարավոր է, իհարկե, որ լեզգիների անընդմեջ հարձակումների հետևանքով Հաղբատի առաջնորդները հիշյալ 30 տարիների ընթացքում (1747—1777 թթ.) հարկադրված լինեին Թիֆլիսում նստելու, որ նրանք կարող էին լինել ու լինում էին ցանկացած ժամանակ, անկախ երկրի քաղաքական վիճակից։ Չէ՞ որ թեմը կոչվում էր Հաղբատի և Թիֆլիսի թեմ (?!)... առաջնորդներն էլ, ուր կամենում, այնտեղ նստում էին։ Բայց առաջնորդների Թիֆլիս տեղափոխվելը Հաղբատավանքի գործունեության վրա չէր կարող ազդել, ինչպես որ լեզգիների ձեռքից տնավեր եղած հաղբատացիների փախուստը, որ կարող էր ամիսներ տևել, իսկ որոշ դեպքերում նաև մեկ-երկու տարի, չի նշանակում, թե դյուղը կործանվել էր»։

Իսկ միաբանների փոխադրվելը, ուզում ենք հիշեցնել Շ. Գրիգորյանին, որոնց նա, չգիտես ինչու, մոռացության է մատնում։ Չէ՞ որ Հր. Ղրիմեցին պարզ ու որոշ գրել է, որ Հաղբատի առաջնորդները վանքն ամայի թողնելով՝ միաբանների հետ միասին են Տփղիս փոխադրվել։ Մի՞թե ամայի և առանց միաբանների մնալը վանքի գործունեության խափանում չի նշանակում։

Այնուհետև Շ. Գրիգորյանը շարունակում է. «Թուրքերը և լեզգիները սրընթաց գալիս անցնում էին՝ ճանապարհին պատահածը թալանելով, հազվագյուտ դեպքերում հաստատվելով որոշ տեղերում մեկ-երկու օրով կամ շաբաթով։ Ի՞նչ հարկ ունեին... և ինչպե՞ս կարող էին և նաև ի՞նչ միջոցներով բանդելու դյուղերն այնպես, որ այլևս այնտեղ մարդիկ բնակվել չկարողանային։ Եվ այդ ինչ նպատակով պետք է արվեր, և ե՞րբ է նման բան արվել առհասարակ...» (էջ 97, ընդգծումներն այստեղ և ամենուր իմն են—Պ. Հ.)։ Այս տողերով Շ. Գրիգորյանը բուռ էության աղավաղում է պատմությունը։

Այս ձևով «հայանպաստ ձևով» ճշմարտությունը 1747—1777 թթ. Հաղբատի վերաբերյալ, Շ. Գրիգորյանը ձեռնարկում է մեկ այլ խնդրի՝ փաստերով ցույց տալ, որ «հիշյալ 30 տարիների մեջ Հաղբատն իրոք բնակելի է եղել, կյանքը չի դադարել այնտեղ» (էջ 98)։

Չնայած որ Հաղբատի վանքի, հարակից շրջանների, կամ ինչպես այն կոչվում է վրաց մատենագրության մեջ՝ Սոմխեթի ամայությունը XVIII դ. 40—70-ական թթ., լեզգիների արշավանքների հետևանքով, հանրահայտ իրողություն է, բայց որովհետև մեր ընդդիմախոսը երկրայելի է համարում նաև այդ և օրերի ու ամիսների գործ միայն, ավելորդ չենք համարում մի քանի քաղվածք կատարել սկզբնաղբյուրներից.

1747... «Լեզգիների զորքը Սամշվիլդեից եկնում՝ ավերում էր Սոմխիթի ձորը ու [ավարը] բերում Սամշվիլդեի բերդը։ Նեղվեց Սոմխիթի ձորը, [Սոմխիթցիք] չկարացին ապրել իրենց տեղերում. Սոմխիթի մելիքն ևս տեղահան եղավ իր տուն ու տեղով և ձորաբերով, նմանապես և Արդութասշվիլիները, բովանդակ Սանահնի ձորը և Հաղբատի ձորը, իշան քաղաք [Տփղիս] և քաղաքից միասին գնացին Մուխրան, ուր Մուխրանի տեր Կոնստանտինն նրանց տեղ տվեց ու իր հողում բնակեցրեց։ Ամբողջ Սոմխիթում՝ Բոլնիսից և Սամծեր[իս]ից զատ՝ ո՛չ մի տեղ այլևս շինություն չկար։ Օրբելիանների երկիրն

---

4 «Յովհաննու Ղրիմեցւոյ Պատմութիւն հոչակաւոր վանից Հաղբատայ ս. Նշանի», հրատ. Հ. Ոսկյան, Վիեննա, 1955, էջ 116։

(Հայրենիքը) ևս այնպես դատարկվեց, որ Դմանիսից և Փիթարեթից զատ ո՛չ մի տեղ այլևս շինություն չկար...» (125—126)։

1750 «Լեզգիների զորքն յոթ հազար հեծյալից բաղկացած՝ գնաց և հարվածեց Ղազախի երկրին, շատ ավար և գերի տարավ...» (134)։

1752 «Լեզգիների զորքը բերին (թաթարների առաջնորդ Հաջի Ջալաբը և գործակիցները— Պ. Հ.) և կանգնեցրին Ղազախում և Բորչալուում. սրանց միանում էին տեղական զորքերն ևս և վերջինների առաջնորդությամբ ավերում էին Սոմխիթն ու Սաբարաթաշվիլոն... որքան էլ Սոմխիթ-Սաբարաթաշվիլոյում հաց կար, բոլորը տարան։ Այսպիսի վնաս զգլբաշն էլ չի հասցրել, ինչ սրանք արին...» (140)։

1753 «[Լեզգիները] բազմաթիվ զորքով իջան Դաղստանից, հասան Բամբակի երկիրը. ավերեցին բերդերը, գերեցին, բնաջինջ արին, անթիվ գերի ու ավար տարան...» (143)։

1754 «Սոմխիթ-Սաբարաթաշվիլոյի տեղերն ավերակ էին դարձած և թշնամի[ներ]ով լի...» (143)։

1755 «Լեզգիների զորքը Սոմխիթի և Սաբարաթաշվիլոյի անտառներն ու ժայռերը մտան և այնտեղից սկսեցին ավերել քաղաք [Տփղիս]ի շրջակա գյուղերը...» (145)։

1757 «Թվին դատարկվեց Սաբարաթաշվիլոն, Սոմխիթը, Օրբելիանների հողը (Հայրենիքը) և ոմանք գնացին Կախեթ, ոմանք անցան Վերին Քարթլի և [այլ] իշխանությունները (սաէրիսթոների). ոչ մի տեղ այն կողմերում այլևս շինություն չէր մնացել...» (146)։

1770, 5. IV «Ավեր են Տաշիրը, Դուջարեթը, Սոմխիթը, որը մեծ և բազմա[մարդ] երկիր է[ր], ուր քառասունից մեկն է մնացել... Սաբարաթաշվիլոն ավերված բազմա[մարդ] երկիր է, ուր հարյուրից մեկն է մնացել՝ խիզաններ» (157)[5]։

Ահա այս է իրողությունը 1747—1770-ական թթ. Հայաստանի հյուսիսային դավառների՝ Լոռու, Հաղբատի ու Սանահնի և հարակից շրջանների մասին։ Կասկած չի կարող լինել, որ Հաղբատի վանքը, ինչպես և գյուղը, ուրիշ բազում բնակավայրերի հետ նույն ժամանակահատվածում ամայի, ավեր ու անմարդաբնակ են եղել։ Ամբողջ երկրամասում շեն են եղել միայն Բոլնիսը, Սամձեվրիսը, Դմանիսը և Փիթարեթը, իսկ սրանք էլ, ինչպես կարող է նկատել ամեն ոք, Հաղբատ գյուղի ու վանքի հետ ո՛չ մի առնչություն չունեն։

Տարօրինակ են, սակայն, Շ. Գրիգորյանի բերած «հակափաստերը», որոնցից մեկը իբրև թե 1751 թ. վախճանված Պետրոս վարդապետ Շնողցու տապանաքարն է։ Կ. Հաֆադարյանի «Հաղբատ» աշխատությունից արտագրելով վարդապետի տապանագիրը, նա գրում է. «1751 թ., այսինքն՝ 40-ական թթ. մի ամբողջ տասնամյակ հետո (?!), Հաղբատի Ս. Նշան մայր եկեղեցու գանգակատան մոտ՝ հյուսիս-արևելյան պատի տակ, հաղբատցիք ամփոփում են շնողցի Պետրոս վարդապետի աճյունը... դնում են... տապանաքար... վրան փորագրված «Թվին ՌՄ»։ Ինչպես գիտենք, Հաղբատը գտնվում է բարձր ու անառիկ սարերի վրա, ուր հիմա ավտոմեքենան ոլորապտույտ բարձրա-

5 Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Գ, Երևան, 1955 (էջերը նշված են հատվածների վերջում)։ Վերջին վավերագիրը կազմված է Հերակլ II-ի համար ու նրա կարգադրությամբ։

նում է հազիվ կես ժամում։ Մերձակա գյուղեր չկան (?!)։ Ո՞վ, ինչպե՞ս և ինչու՞ իր մեռելը պիտի բերեր այստեղ թաղելու, և ո՞վ պիտի տաշեր որձաքարից պատրաստած այս մահարձանը... Ցավոք, միայն եղակի և խիստ արժանավոր անհատների շիրմաքարերն են արձանագրությամբ առանձնանում... Այլապես մեկի փոխարեն մենք մի շարք շիրմաքարեր կարող էինք հիշատակել...» (էջ 98—99)։

Ամբողջ XVIII դարում Հաղբատում Շ. Գրիգորյանը ո՛չ մի շիրմաքար չի կարող ցույց տալ. այս առաջին, որովհետև այդ դարում շատ քիչ տարիներ է այն բնակելի եղել։ Երկրորդ՝ 1751 թվականը 40-ական թթ. մի տասնամյակով չի բաժանվում։ Եվ երրորդ՝ եթե Շ. Գրիգորյանը ավելի ուշադիր կարդար Կ. Ղաֆադարյանի «Հաղբատ» աշխատությունը, ապա կտեսներ, որ Շնողցի Պետրոս վարդապետը այլ ոք չէ, քան Հաղբատի վանահայրը 1836 թ. հետո (էջ 277), հետևաբար՝ ութսունհինգ տարի առաջ՝ 1751 թ., մեռած ու թաղված չէր կարող լինել, իսկ եթե կարդար Կ. Ղաֆադարյանի օգտագործած սկզբնաղբյուրները, տվյալ դեպքում Ռոստոմ Բեգ Երզնկյանցի «Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ...» գիրքը, ապա վերջինիս 54 և 88 էջերում կտեսներ, որ Պետրոս վարդապետը վախճանվել է 1846 թ., Ռ. Երզնկյանցի օրերում («յաւուրս մեր»)։ Կիմանար նաև, որ այդպիսի մահարձան Հաղբատում չի եղել ո՛չ Ղրիմեցու ժամանակ՝ 1822—1827 թթ., ո՛չ էլ Ս. Ջալալյանի օրոք՝ 1842 թ.։ Իսկ եթե լավ զններ տապանաքարը կամ Կ. Ղաֆադարյանի հրատարակած լուսանկարը, կտեսներ, որ արձանագրությունը բաղկացած է 9 տողից և վերջին տողի վրա միայն մեկ տառ է կարդացվում՝ Մ, մինչդեռ մնացած գրերից նշմարվում է մեկ-երկու գծիկ, այն էլ տողի վերջում։ Եվ երբ այդ նույն տապանագրի՝ Ռ. Երզնկյանցի հրատարակությունը (այստեղ հայկական թվականը վերածված է արաբականի) բաղդատեր բուն արձանագրության հետ, կտեսներ, որ IX տողի վրա գրված են եղել 1846 թվական նշանակող հայերեն տառեր, որոնք Ղն պիտի լինեին, այսինքն՝ 95, որովհետև ՌՄ (1200) +Ղն (95) +551=1846 թվական։ Չենք ասում արդեն, որ ամենաանճարակ փորագրողն անգամ, երբ տողի վրա բավարար տեղ կա, երկու տառանոց թվական արտահայտող բառը (ՌՄ) տողադարձ չէր անի և մի տառը (Մ) փոխադրի հաջորդ տող։ Եթե այս բոլորն արած լիներ Շ. Գրիգորյանը, վերևի տողերը հազիվ թե գրած լիներ, հազիվ թե երկրորդ անգամ պնդեր, որ «Պետրոս վարդապետը» թաղվել է «եկեղեցու գավիթում» (էջ 99), մոռանալով, որ այդ տապանաքարը զանգակատան հյուսիս-արևելյան պատի տակ է, իսկ զանգակատան պատը և եկեղեցու գավիթը տարբեր բաներ են։ Եվ սա եզակի չէ. մի երկու էջ առաջ էլ Շ. Գրիգորյանը խոսում է «Կախի վանքի» մասին (էջ 95), երբ հայտնի է, որ այդպիսի վանք գոյություն չի ունեցել։

Շ. Գրիգորյանի բերած հակափաստարկներից մեկն էլ բանասեր Աղ. Երիցյանցի «Ахпатский монастырь»[6] հոդվածի մի հպանցիկ ակնարկն է, ըստ որի Հաղբատ գյուղը «մի քանի տարի անմարդաբնակ լինելով, կրկին բնակեցվել է 1766 թ.» և որ վրաց Հերակլ թագավորը 1749—1779 թթ. միջև հինգ անգամ արշավել է Հայաստան և «1769 թ.» այցելել է Հաղբատ (էջ 99)։

Նկատենք այս առնչությամբ, որ Հերակլ II-ի Երևան արշավելը (այն էլ հինգ անգամ) մինչև 1777 թ. ոչնչով չի փոխել արդեն բնակիչներից թափուր

6 Տե՛ս «Кавказская старина», 1873, № 3.

Հաղբատի վիճակը և հետո՝ Երիցյանցի հաղորդման մեջ առկա է սովորական անուշադրության վրիպակ։ Նրան ժամանակակից, բնիկ հաղբատցի Ռ. Երզնկյանցը գրել է. «Լեզկիք ի սկզբան ԺԷ դարուն իսպառ աւերեցին զՀաղբատ. արարին զայն իբրև ամայի անապատ և մնաց թափուր ի բնակչաց մինչև ց1776 ամն»։ Երզնկյանցը պնդել է նաև, որ «Աբրահամ արքեպիսկոպոս յաւուրս Հերակլ արքայի Վրաց մարդաբնակ արար զիւղն Հաղբատ և պայծառացոյց զվանքն 1776 ամի»։ Նա ասում է, վերջապես, որ, «Հաղբատ և շրջակայ գիւղօրայք նորա բնդեկար մնացին անմարդաբնակ իբրև ամայի անապատ, մինչև ց1776 ամն. բայց... ի ձեռն Աբրահամ վարդապետի... վերստին նորոգեցաւ զՀաղբատ, արար շեն և մարդաբնակ»[7]։

Անկախ այն բանից, որ 1776 թ. պետք է լինի 1777, որովհետև Աբրահամն այդ տարի է Հաղբատավանքի առաջնորդ կարդվել, Հաղբատին անդրադառնալիս մենք նրա պատմիչին ենք հավատում, և ո՛չ Շավիղ Գրիգորյանի այն ենթադրությանը, թե 1766 կամ 1769 թթ. «անխափան գործում էր վանքը և նրա շրջակայքում ապրում էր հայ շինականը» (էջ 99)։

Աղ. Երիցյանցի խոսքերը Հաղբատի իրական վիճակը 1747—1777 թթ. միջոցին պարզելու համար որևէ նշանակություն ու արժեք չեն կարող ունենալ նաև այն պատճառով, որ 1760—1770-ական թթ. ապրում էր ամենայն հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին, որը 1766 թ. սեպտեմբերի 8-ին իր հիշատակարանում արձանագրել էր տվել հետևյալ տողերը. «Նախկին կամք սրբազան Վեհին էր այն, զի... Տէրունի լիցի թեմն Հախպատու, որովհետև այժմ աւերակ կայր սուրբ վանքն (ըստ որում Աղէքսանդր սրբազան Հայրապետն արարեալ էր Տէրունի, վասն աւերիլոյ վանիցն)։ Այլ ո՛չ Արքայն Հերակլ և ո՛չ Զաքարիա վարդապետն և ո՛չ ժողովուրդք Քաղաքին, որք Հախպատու էին թեմ, կամէին լինիլ այսպէս, այլ ասէին թե՝ զանուն Առաջնորդութեան Հախպատու ո՛չ կամիմք թէ պակասեսցի ի միջոյ մերմէ, այլ ի Քաղաքիս ի միջի մերում նստիցի, որքան աւեր կայ սուրբ վանքն»[8]։ Կաթողիկոսն, ինչպես տեսնում ենք քաղվածքից, «Հաղբատի թեմ» անունն անդամ ուզում էր վերացնել, որովհետև վաղուց վանքն ավեր էր։

Շ. Գրիգորյանը կշտամբում է մեզ, որ վատ ենք օգտվում «քննարկվող շրջանի վերաբերյալ գոյություն ունեցող տպագիր և արխիվային նյութերից», չենք թերթել «հանրահայտ աշխատությունները», և, որքան էլ տարօրինակ է, մատնանշում է Հովսեփ Էմինի Հուշապատումի հայերեն թարգմանությունը՝ տպագրված Երևանում, 1958 թ.։

Կարդացել ենք Հովսեփ Էմինի Հուշապատումը թե ոչ, էական չէ, քանի որ դրանից հետո Սայաթ-Նովայի Հաղբատյան կյանքի մասին մեր դրածը չպիտի փոխվեր։ Էմինը խոսել է 1763 թ. հուլիսի իր ուղևորության մասին, իսկ այդ ժամանակ վանքն ու գյուղը լիակատար ամայի էին, եթե անդամ Աղ. Երիցյանցի տվյալներով էլ առաջնորդվենք։ Ի՞նչ է ասել, սակայն, Էմինը՝ ըստ Շ. Գրիգորյանի քաղվածքի (արտագրում ենք տառացի—Պ. Հ.). «Էմինի հափագն էր, որ իր նորագիր քսան և չորս զինվորներուն հետ երթան Հաղբատի թեմը, որ երկու օրվա ճամփա հեռու էր Թիֆլիսեն՝ դեպի հարավ-արև-

7 Ռ. Երզնկյանց, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ, էջ 10, 88, 113։

8 «Դիվան հայոց պատմության», գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 531—535։

մուտք։ Այս շրջանի բնակիչները մասամբ առևանգված էին ասպատակողներն և մասամբ էլ գաղթած էին Կախեթ՝ Իշխանի ժառանգական հայրենիքը ապրելու համար վանքի մեջ։ Լեզգիներն ընդհանրապես այս ամայի և լեռնային երկրի մեջ է, որ կունենային իրենց ժամադրությունը» (էջ 99—100)։ Ընդգրծված բառերը ով էլ կարդա, պարզ կտեսնի, որ Էմինի ժամանակ Հաղբատը ամայի էր և Էմինն ինքն էլ այդ վկայում է։ Շ. Գրիգորյանին չեն կարող փրկել նաև մեջ բերած անգլերեն մի-երկու բառը՝ „to the inhabited bishopric of Haghpat", որովհետև դրանք ևս հաստատում են, որ Հաղբատի թեմի մի մասն է միայն եղել բնակելի, և ո՛չ վանքը, քանի որ թեմը ուրիշ բան է, վանքը՝ ուրիշ։

1747—1777 թթ. ընթացքում Հաղբատի վանքն ավեր ու անմարդաբնակ լինելը հերքող Շ. Գրիգորյանը իր վերջին փաստարկը, որքան էլ զարմանալի է, բերում է Հովհաննես Ղրիմեցու «Պատմությունից» և ուշադրություն բևեռում է այն հատվածի վրա, ուր նկարագրված է Մխիթար Քալանթարի 1776 թ. դեպի Հաղբատ կատարած այցելությունը, ըստ որում ո՛չ թե ուղղակի մեջբերելով, այլ իր ուզած ձևով վերապատմելով և շեշտը դնելով Մխիթար Քալանթարի՝ Հաղբատում մորթած անասունների և արած քեֆի վրա։ Տարակարծության տեղիք չտալու համար արտագրում ենք Ղրիմեցու «Պատմության» այդ հատվածը.

«...Եւ ի նմին ամի ի շրջիլ նորա (Մխիթար-Քալանթարի—Պ. Հ.) բազմութեամբ տանուտերաց իւրոց և յոլով սպառազինելոց և քանի մի եկեղեցականաց, ընդ ամենայն արանց իբրև եօթանասնից, ի զնին սահմանաց Շուլավերայ, և մերձակա սահմանակից վայրաց, դէպ լինէր զալ նմա մինչև ի սահմանս նոր Պղնձահանքին... որ է հանդէպ Հաղբատայ... տեսանէ զվանս Հաղբատայ և Սանահնի... իջանէ ի լեռնէ անտի իւրովքն հանդերձ և դայ նախ ի Հաղբատ. և մտեալ զառաջինն յաւագ եկեղեցին որ Նշանի, երկրպագէ ի նմա Բարձրելոյն Աստուծոյ և ապա հայեցեալ ի խրթնութիւն նորա և յանշքութիւնն, զի այր աւազակաց էր լեալ՝ ի բազում ժամանակաց հետէ, յամայութեան կալով. յարտասուս հարկանի այրն բարեպաշտ և զի աղտեղեալ էին բովանդակ եկեղեցիք ուխտիս յաւազակաց անտի. և բազմութիւն բուսոց և թփոց խիտ առ խիտ բուսեալ զնոքօք, ծածկեալ ունէին զզլուխս նոցա և զորմունս առ հասարակ, վաղվաղակի հրամայէ բազմութեան արանցն՝ սրբել և մաքրել և զամենայն բոյս և տունկ առ հասարակ յարմատոց խլել։ Ի կատարիլ հրամանին, սրբեալ նոքա ի բաներական օրհնութեամբ, ի յաջորդ աւուրն տայ պատարագել զՔրիստոս յեկեղեցւոջ անդ սուրբ Նշանին և յաւարտիլ պատարագին՝ զննեալ նոքա զյոլով մատաղս առնէ նաւակատիս խնջոյից և խրախութիւն ամենայն բազմութեանն (այսինքն՝ իր ուղեկիցների համար—Պ. Հ.) մեծահաց հանդերձանօք... յետ կատարելոյ աստեն, զայնպիսի հանդէս և զգործս բարեպաշտութեան, դարձ առնէ իւրովքն ի Նուլավեր... Այս ամայութիւն սկսեալ էր ի մահուանէ անտի Նատրշահայ, որ եղև յերեսաց ասպատակութեանց Ալանաց կամ Ղեկաց, որք են Լէկդիք... ամայացան յոլով գիւղորայք և վանորայք և զաւառք, ընդ որս և այս մենաստան և գիւղ նորա Հաղբատայ առ ցրուելոյ և խոյս տալոյ բնակչաց սոցա յամուրս և զանքոյթ տեղիս»[9]։

9 «Յովհաննու Ղրիմեցւոյ Պատմութիւն», էջ 121—122։

Այս կարևոր հատվածները կարդալուց հետո փոխանակ ուշադրություն դարձնելու մեր ընդգծած էական կետերի վրա, որ պարզորոշ վկայում են գյուղի և վանքի ամայության, միաբանության հեռանալու, վանքը ավազակների կողմից պղծվելու և ապականվելու մասին, Շ. Գրիգորյանը արտագրում է «զեննալ նաև գյոլով մատաղս, առնէ նաւակատիս խնջոյից և խրախութեան ամենայն բազմութեանն մեծահաց հանդերձանօք» տողերը, որ ժամանակակից հայերենով նշանակում են՝ «մորթելով նաև շատ մատաղ, մեծ սեղան պատրաստելով՝ ողջ բազմության համար կատարում է խնջույքի և ուրախության տոն»,— բացատրում է, որ իբրև Մխիթար Քալանթարը «բազում անասուններ [է] մորթում», կշտամբում է մեզ, որ այդ տողերը դիտավորյալ դուրս ենք թողել, քանի որ «Ղրիմեցին նկատի ունի Հաղբատի բնակիչներին, որոնց անասուններն է, որ պիտի մորթվեին «մատաղի» համար» որ մենք հատուկ նպատակով Մխիթարին ու նրա 70 ուղեկիցներին ուխտավոր ենք դարձրել, «որովհետև միայն ուխտավորները կարող էին իրենց հետ անասուն բերել մատաղի համար», և վերջապես տալիս է իր վերջնական դատավճիռը. «Ինչ վերաբերում է վանքի անտերունչ վիճակին... ապա դա բնավ ապացույց չէ այն բանի, որ 1740-ական թթ. հետո վանքը կատարյալ ամայի ու ավեր է եղել» (էջ 100—101) և այլն։

«Մատաղ» բառը մեր հորինածը չէ, Ղրիմեցին է գրել։ «Բազում անասուններ մորթելու» մասին Ղրիմեցու մոտ խոսք չկա, և մենք չէինք կարող այդպիսի բան հերյուրել։ Վերջապես՝ Հաղբատի գյուղացիների մասին Ղրիմեցին ոչինչ չի ասում, այլ միայն՝ Մխիթար Քալանթարին ուղեկցող բազմության։ Ինչպե՞ս կարելի է Ղրիմեցու խոսքերով Ղրիմեցուն հերքել, երբ նա ամեն բան այնքա՞ն որոշակի է ասել։

Եվ այսպես՝ ըստ պատմական վավերագրերի 1777 թ. Հաղբատի վանքը դեռ ավեր ու անմարդաբնակ էր, բայց գյուղն այդ տարվանից, ըստ Երզրնկյանցի, արդեն շենացել էր։ Վանքի վերաշինումը կամ իրական վերականգնումը տեսական ամայությունից հետո տեղի է ունեցել 1778-ին։ Այդպես է ասված Սիմեոն Երևանցի կաթողիկոսի Հիշատակարանի մեջ, իսկ վերջինս, ինչ խոսք, հայկական վանքերի իր օրերի վիճակը ավելի ստույգ պիտի իմանար. տոն մեր օրերի մարդիկ։ Համաձայն այդ հիշատակարանի՝ Սիմեոն Երևանցիս 1777 թ. սեպտեմբերի 5-ին, ընդառաջելով Հերակլ II թագավորին և Տիֆլիսում բնակվող հաղբատցիներին, Երուսաղեմի Նվիրակ Աբրահամ վարդապետին կարգում է Հաղբատի առաջնորդ և անհրաժեշտ կարգադրություն անում շահագրգռված անձանց՝ օգնելու նրան, որ վերաշինվի Հաղբատը. «... արքայն Հերակլ գրեալ էր սրբազան վեհին, թէ կամիմ շինել զՀախպատ, Աբրահամ վարդապետն առաջնորդ արա նոյն վանիցն և իւր բոլոր վիճակին... Զսոյն խնդիր և Հախպատու վանից թեմի ժողովրդոցն ևս որք ի Թիֆլիզ գրեալ էին բազմակնիք թղթով առ սրբազան վեհն։ Եւ սրբազան վեհն կատարելով զխնդիր նոցա, գրեաց զկոնդակ առաջնորդութեան համաձայն ի վերայ ամենայն թեմին և վիճակին Հախպատու վանից. ընդունիլ զնա ինքեանց առաջնորդ՝ և օժանդակել նմա ի շինուրիւն վանիցն այնմիկ։ Թուղթ ևս առ նոյն նոր առաջնորդ Աբրահամ վարդապետն գրեաց... ուրեմն՝ հետևեաց վանիցդ շինուրեան... Թուղթ ևս առ Հերակլ Արքան գրեաց... ծանուցանելով զկատարումն խնդրոյն... ուրախացաւ վասն բարի դիտմանն իւրոյ, որ կամէր նորոգել զՀաղպատ, ասելով ևս՝ թէ տացէ, տէր, զի և այլոց վանօ-

ելից և սրբութեանց վայրաց ունիցիս զղոյն, հանդերձ յաջող ժամանակաւ և խաղաղութեամբ, զի շինեսցես զնոսա ևս, ի պայծառաղարդութիւն և ի ճոխութիւն օրհնեալ անուան քոյ և թագաւորութեան... յորդորումն, մնալ հաստատ ի վերայ նոյնոյ դիտաւորութեան, առ ի շինել զսուրբ վանքն զայն»[10]։

Աբրահամը, սակայն, ինչ-ինչ մասնավոր դիտավորություններով, ձգձգում էր կատարել կաթողիկոսի հանձնարարությունը Հաղբատի վանքի վերաշինման վերաբերյալ և այդ ու հաջորդ տարվա մեծ մասը մնում է Տփղիսում։ Այս բանը Սիմեոն Երևանցուն խիստ զայրացնում է, և նա 1778 թ. մայիսի 14-ին ու նոյեմբերի 10-ին նրան ուղղում է հանդիմանության և մեղադրանքի կոնդակներ։ Առաջին կոնդակում ասված է. «Այնու անուամբ եղև սա Առաջնորդ՝ զի երթեալ շինեսցէ զՀաղպատ՝ և անդ նստցի, իսկ այժմ ո՛չ շինելոյ նշան զոյր, և ո՛չ անդ գնալոյ։ Զի զրէին թէ՝ կամի զմասնաւոր շինութիւն ինչ արկանել անդ, և զմի ոմն իւրեան վէքիլ հաստատել և դնել անդ՝ և ինքն ի քաղաքոջն նստիլ։ Վասնորոյ և զայս ևս յերևսն բերելով գրեաց թէ՝ մեք զքեզ այնու անուամբ արարաք Առաջնորդ՝ որ բազմաժամանակեայ աւեր տունն զայն շինեալ անդ նստցիս. իսկ այսպէս ո՛չ առնես, ապա զի՞նչ հարկ էր երկու Առաջնորդ նստիլ յայդ քաղաքի, և ներհակ միմեանց վարիլ. լինիլ դայթակղութիւն ժողովրդոց, և մեզ առիթ զզուանաց և զլխացաւութեանց... Եւ առ այսոսիկ յանդիմանութիւն յոյժ, և պատուէր... երթալ զՀախպատ շինել՝ և անդ նստիլ»[11]։ Երկրորդ կոնդակում կարդում ենք. «Առաջնորդն Հախպատու ի վանքն իւր նստի և ո՛չ ի քաղաքդ (Տփղիս—Պ. Հ.), զի քաղաքդ ի բնէ անտի Աթոռոյս է Առաջնորդարան, և ոչ այլում։ Այդ սևագլուխդ ևս (Աբրահամը—Պ. Հ.) եթէ ի վանքն ոչ նստիցի, ոչ է Առաջնորդ և ոչ կարէ եպիսկոպոս լինիլ... քանզի... Հախպատ երթալ ո՛չ կամի, այլ Կաթողիկէ եկեղեցին Հախպատու թեմ է շինեալ և իւր Առաջնորդն ևս անդ կամի նստիլ միշտ...»[12] և այլն։

Այս մեծարժեք վավերագրերը կարդալուց հետո ամեն մարդ Հաղբատի վանքի վերաշինումը կամ նոր բնակեցումը պետք է հաշվի 1778 թ. կեսերից, հետևապես Սայաթ-Նովան այդ տարվանից միայն կարող էր Հաղբատում լինել։

Բայց չէ՞ որ 1765-ից Սայաթ-Նովան քահանա էր Կախի ավանում, որ ուքսորի պես մի բան է, ինչո՞ւ հանկարծ նրան ավելի պատվավոր պաշտոնի էին փոխադրում և Հաղբատի վանքի լուսարար դարձնում։

Մեր նախորդ հոդվածում համառոտակի գրել էինք, թե ինչու այդպես ստացվեց։ Բայց մեր ընդդիմախոսը, ըստ երևույթին, լավ չի հասկացել։ Ստիպված ենք կրկնելու։

Սայաթ-Նովայի կյանքի մասին կնոջ մահվանից հետո դատողություններ ունենալիս պետք է լավ իմանալ հետևյալ ճշմարտությունը. «Կին քահանային եթէ վախճանի ի վաթսնամենից ի վեր, քահանայն կացցէ յեկեղեցւոջն, ապա եթէ ի մանկութեան հանդիպի՝ երթալ առ ուխտականս և անդ լինել մինչև ցվախճան... և եթե ո՛չ՝ եղիցին նզովեալ»[13]։ Տակավին IV դարում սահման-

10 «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԱ, Թիֆլիս, 1913, էջ 164—166։

11 Նույն տեղում, էջ 269—271։

12 Նույն տեղում, էջ 382։

13 «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հատ. Բ, Երևան, 1971,

ված և X—XI դդ. Հայոց Կանոնագրքի մեջ ներմուծված այս կետը շատ խիստ էր պահպանվում։ Հիշենք դեթ XII դարի միջնադարյան Հայաստանի պատկառելի հոգևոր գործիչներից մեկի՝ Ներսես Շնորհալու հայտնի խոսքերը, որոնք հետաքրքրասերները կարող են կարդալ նրա նամակների հատորում[14]։ XVIII դարի երկրորդ կեսին էլ հայոց եկեղեցու պետերը շատ խիստ հետևում էին այս նույն օրենքին։ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը 1778 թ. նոյեմբերին դրած կոնդակներից մեկում, վերհիշեցնելով Կյուրեղ Երուսաղեմացու հայտնի խոսքերը, հրահանգում էր. «Քահանայ որ կոյս իցէ և կամ այրի, և աշխարհի քահանայութիւն արասցէ, ընդ նզովիւք է ինքն և ընդունօղքն»[15]։

Կնոջ մահվան տարին, 1768-ին, Սայաթ-Նովան շուրջ 50 տարեկան էր, հետևաբար, ուզեր թե չուզեր, պիտի փոխադրվեր վանք, որպեսզի չարժանանար նզովքի։ Կախի ավանի երեցը Հաղբատի թեմի առաջնորդին էր ենթակա, իսկ Հաղբատի վանքը 1768 թ. շատ առաջ անմարդաբնակ էր, առաջնորդը միաբաններով հանդերձ բնակվում էր Տփղիսում, Բերդի մեծ կամ կաթողիկե եկեղեցու բակի շենքում, որ վերածված էր առաջնորդարանի։ Այստե՛ղ պիտի փոխադրվեր 1768-ին նաև Սայաթ-Նովան, այստե՛ղ սպասավորեր, մինչև հարմար առիթ լիներ Հաղբատ մեկնելու։ Բարեպատեհ առիթն, ինչպես տեսանք, ստեղծվեց 1778 թ. կեսերին, ավելի ճիշտ՝ մայիսից հետո։ Միայն այսուհետև է, որ Սայաթ-Նովան Տփղիսից փոխադրվում է Հաղբատի վանք և սպասավորում Սուրբ Նշան վանքի տաճարում։

Մեր ասածը և՛ նախորդ հոդվածում, և՛ հիմա այդ է։

Շ. Գրիգորյանը այս դեպքում էլ առարկելու բան է գտնում։ Նախ՝ առանց որևէ փաստի, 1777 թ. և հաջորդ տարիները հոչակում է Հաղբատի «հոգևոր գործունեության վերելքի շրջան» (էջ 101), մոռանալով, որ տեսական ամայությունից ու ավերներից հետո բնակելի դարձվող վանքում շենքեր կառուցելն ու նորոգելը հոգևոր գործունեության վերելքի հետ կապ չունեն։ Ընդհակառակը, Հաղբատում այդ տարիներին հոգևոր արժեքներ՝ ձեռագրեր են ոչնչացվել, որոնց մասին ցավով պատմում է Ղրիմեցին։

Ապա՝ գրելով թե «1777 թ. Հաղբատի առաջնորդ դարձած Աբրահամ Թեմիրտաղցին (Թռակեցին) աղեն փոխադրվել ու նստում էր Հաղբատում» (էջ 101), Շ. Գրիգորյանը ճիշտ չի շարադրում փաստերը, որովհետև 1778 թ. նոյեմբերին անդամ Աբրահամը դեռ Տփղիսում էր։

Հաղբատի վանքի նոր դատարկումը, ինչպես նաև Սայաթ-Նովայի մեկնումը Հաղբատից Տփղիս մենք դրել ենք 1784 թ., հիմք ունենալով նույն այդ տարին (1784 մարտի 12) Տփղիսում Տեր-Ստեփան անունով հոգևորականի՝ կաթողիկոսից վեղար ստանալու իրողությունը (նշանակում է՝ այդ Տեր-Ստեփանը այրի քահանայությունից վանական դարձած անձնավորություն էր և թերևս Սայաթ-Նովան, որի հոգևոր անունը նույնպես Տեր-Ստեփան էր), պատմարան Հ. Խաչատրյանի՝ Մատենադարանում հայտնաբերած մեծարժեք վավե-

էջ 135, կանոն ՃԽԹ։ Զմոռանանք, որ քահանա էին ձեռնադրում միայն երեսուն տարեկանից (տե՛ս նույն տեղում, էջ 24), իսկ մանկական հասակը մինչև 60 տարեկան էր։

14 «Գիրք որ կոչի Ընդհանրական, արարեալ... Ներսէսի Շնորհալւոյ», Սանկտպետերբուրգ, 1788, էջ 62։

15 «Գիվան հայոց պատմության», գիրք ԺԱ, էջ 367։

բադիրը Սայաթ-Նովայի որդիների, իբրև «Ղարիբական վաճառականներ», 1785 թ. մարտի 5-ին Ղզլարում բնակվելու վերաբերյալ և Ախվերդյանի գրառած ավանդական զրույցը Սայաթ-Նովայի՝ Հաղբատից Թիֆլիս փոխադրվելու դրդապատճառի՝ որդիներին ապահովության համար Հյուսիսային Կովկաս ճանապարհելու վերաբերյալ։ Մանավանդ որ 1784 թ. լեզգիների ներխուժումը Վրաստան մեծ իրարանցում էր առաջ բերել ամենուր և առիթ դարձել զանգվածային գաղթի։

Վրաց պատմաբանները անդրադառնալով Գեորգիևսկի պայմանագրից, այսինքն՝ 1783 թ. հուլիսի 24-ից հետո պատահած անցքերին, գրել են. «Լեզգիների ամայացնող ասպատակությունները շարունակվեցին երեք տարի։ Քարթլիի և Կախեթիայի բնակչությունը կրկին սկսեց պակասել։ Նրանք, որոնք հնարավորություն ունեին, փախչում էին երկրից։ Մնացածը փրկություն էր որոնում բերդերում»։ Եվ վերջապես «1785 թվականին Խունզախի (Ավարիայի) տիրակալ Օմար-խանը 20.000 զորքով մոտեցավ Կախեթիայի սահմանին։ Հերակլ II թագավորի դրությունը ճակատագրական էր։ Նա չէր կարող Քարթլիի ջոկատներն օգտագործել, քանի որ վախենում էր Ախալցխայի կողմից լեզգիների հարձակումից»[16]։

Մեր ընդդիմախոսը, սակայն, իր կանխակալ կարծիքն ունի, որ Հաղբատը միշտ էլ շեն է եղել։ Եվ այս դեպքում էլ ընդարձակորեն վերապատմելով վաղուց հայտնի անցքերը հայտարարում է, թե ավարացիների Օմար-խանի հրոսակները Վրաստանում և Լոռիում են եղել 1785 թ. ամառը։ Բայց ո՞վ գիտի դա կամ ո՞վ է վիճարկում։ Հաղբատի միաբանները ո՛չ թե պիտի սպասեին, որ Օմարը գար և իրենց թալաներ, կոտորեր կամ գերի տաներ, այլ օր առաջ գլուխները ազատելու մասին պիտի մտածեին, ինչպես և անում են։ Կարծ՝ մենք գրել ենք ո՛չ թե Օմար-խանի արշավանքի մասին դեպի Վրաստան, այլ լեզգիների Վրաստան ներխուժելու առաջին տարիների՝ 1783—1784 թթ. մասին և 1784-ն էլ համարել Հաղբատի նոր ամայության սկիզբ, հենվելով նաև Օ. Պ. Մարկովայի «Ռուսաստանը, Անդրկովկասը և միջազգային հարաբերությունները XVIII դարում» աշխատության մեջ առկա մի քանի վավերագրերի վրա։ Չգիտես ինչու, Շ. Գրիգորյանը նախ հայտարարում է, թե «Դրանք խոսում են ո՛չ թե լեզգիների նոր հարձակման, այլ այդ հարձակման նախորդ շրջանում գոյություն ունեցող իրավիճակի մասին» (էջ 105), իսկ ապա ավելացնում. «Այն վավերագրերը, որոնցից օգտվել է Օ. Պ. Մարկովան և որոնք նկատի ունի Հակոբյանը... ավելի քան 150 տարի հայտնի են ամբողջ աշխարհին» (էջ 104) ու թվում մի շարք պատմաբանների ազգանուններ (Լեո, Աբ. Հովհաննիսյան, Մ. Ներսիսյան, Զ. Գրիգորյան և ուրիշներ)։

Մարկովայի գրքում եղած և մեր օգտագործած նյութերը՝ գրված 1784-ին, սրանք են. «Появились и лезгины. «Дороги все заражены в Грузии лезгинами, большей частью со стороны турецкой»,— рапортовал 6 июля (1784 г.— П. А.) С. Д. Бурнашев. П. С. Потемкин, побывавший в Тбилиси в сентябре и известивший князя Г. А. Потемкина о наступлении спокойствия в Закавказье, теперь был смущен. «Здесь, ваша светлость,— писал он,— изволите видеть, сколь трудно сделать прямое о тех делах и народах заключение», «Давно что такое замешательство не случалось в

16 «История Грузии», т. I, Тбилиси, 1946, էջ 438։

Грузии»,— писал Ираклий П. С. Потемкину 29 ноября. Вскоре появились, правда, пока еще слабые надежды на улучшение обстановки. Той же осенью (1784 г.)»[17].

Բայց չէ՞ որ ո՛չ Լեոյի, ո՛չ էլ մյուսների գրքերում այս տվյալները չկան։ Մեղադրական կարդալուց առաջ պետք էր էջով ու թվականով ցույց տալ, թե ո՞րտեղից է Մարկովան արտագրել վերևի տողերը և նշանակել արխիվային այս համարները. «ЦГВИА, ф. 52, оп. 1/194, д. 331, ч. 6. л. 17—17 об., ч. 9, лл. 30—31 об. и 78—78 об.»:

Հաղբատի վանքի նոր ամայությունը դնելով 1784-ին և կապելով լեզգիների նոր արշավանքների բերած առաջին, շոշափելի աղետների հետ, մենք նույն ժամանակի ռուսական պաշտոնական վավերագրերից բացի հենվել ենք նաև Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու կոնդակների վրա։ Դրանցից մեկում, որ խորագրված է «Թուղթ առ Դէօրկին Միրզա արքայորդին Վրաց, վասն Հաղպատայ անուանեալ առաջնորդ Դաւիթ վարդապետին, գրեցաւ յամի փրկչին 1792, և ի յուլիսի», ասված է. «... Թէ գրով և թէ բերանով, պատուիրեցաք համեստութեամբ և խաղաղութեամբ վարել, և զվանաց շինութիւն ջանալ... Այլ նա... ի յառնել լեզկեացն, զվանքն դատարկեալ եկն ի քաղաք, և ոչ ևս դարձաւ։ Բազում ամայացեալք շինացան վերստին, իսկ նա ի վանիցն զայլոց շինեալ փայտակերտսն ևս քակեալ երեր յայդր յորջ հաստատել ինքեան և զվանքն ամայի թողուլ»[18]։

Ահա և մյուսը՝ գրված նույն օրերին և ուղղված Հերակլ II-ին. «Դաւիթ սեազլուխն... առաջնորդ կարգեցաք սրբոյ վանիցն Հախպատու և մէր պատուէրն նմա այս էր... մանաւանդ զսուրբ վանքն զայն շէն և պայծառ պահեսցէ... Այլ նա... մինչ լեզկեաց յարուցումն եղև, զվանքն դատարկեալ եկն յայդր, և ո՛չ ևս հոգաց դառնալ։ Բազում ամայացեալք շինացան խնամօք Տեառն և Տիրաբար հոգացողութեամբ Աստուածազօր Արքայիդ Հերակլայ։ Բայց նա ո՛չ միայն ոչ փոյթ արար դառնալ ի սուրբ վանսն և շինացուցանել, այլ զյառաջնմէ յայլոց շինեցուցեալ կերտուածսն ևս քակեալ երեր յայդր մշտնջենապէս բնակութիւն հաստատել ինքեան» և այլն[19]։

Պակաս ուշագրավ չէ և կաթողիկոսի 1792 թ. հոկտեմբերի նամակը Հերակլին. «Մենք զդա եպիսկոպոս և առաջնորդ եմք արարեալ որ միաբանիւքն ի վանքն նստցի և շինութիւն առնիցէ... առ ի տալ նմա դեղ ապաշխարհութեան և խայթ զգաստութեան լռեցուցաք յեպիսկոպոսութենէն՝ պայմանաւ ժամանակի երկուց ամաց, զի զգուշացեալ յամենայն ցոփգնացից... միաբանիւքն երթեալ ի սուրբ վանքն նստցի։ Եւ Աստուածասէր օրհնեալ Արքայդ որ յաջողութեամբ Տեառն զթշնամիսն տէրութեանդ կորազուխ արարեալ, զբազումս յամայացելոց երկրացդ շինացուցեր, Հաղպատայ գրուեցեալ գիւղականացն ևս հրամայեցես ժողովիլ ի նոյն գիւղն իւրեանց, ի հաստատուիլն շինութեան սրբոյ վանացն...» և այլն[20]։

Մեջբերումներից որոշակի երևում է, որ Դավիթը ո՛չ թե Օմար-խանի, այլ լեզգիների արշավանքը սկսվելու օրերից է Հաղբատի վանքը ավեր ու անմար-

---

17 О. П. Маркова. Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, М., 1966. *էջ 180—181։*

18 *«Դիվան Հայոց պատմության», գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 580։*

19 *Նույն տեղում, էջ 582։*

20 *Նույն տեղում, էջ 590։*

դաբնակ թողել, քանդել փայտաշեն կառուցվածքները և անգամ 1792 թ. նոյեմբերին նոր վերադառնալու մասին չէր էլ մտածում։ Կաթողիկոսը խնդրում էր Հերակլին՝ ստիպել Դավթին առաջիկա երկու տարվա ընթացքում միաբաններն առնել ու Հաղբատ վերադառնալ, Հաղբատի ցրված գյուղացիներին հավաքել և իրենց գյուղը վերադարձնել։

Մի քանի օրինակ Շ. Գրիգորյանի հետագա առարկություններից ու «հիմնավորումներից» չենք կարող չբերել, որպեսզի պարզ դառնա նրա մեթոդը։

ա. Իբրև ապացույց, որ «Հաղբատը բնակելի է եղել նաև 1780-ական թթ.», նա վկայակոչում է Մ. Թաղիադյանին. «Գիտենք, որ Թաղիադյանն էլ այդ ժամանակ էր իրագործում իր հայտնի շրջագայությունը» (էջ 102)։ Բայց չէ՞ որ Թաղիադյանը ծնվել է 1803 թ. և դրանից քսան տարի առաջ չէր կարող «շրջագայել»։ Երևի Շ. Գրիգորյանը կասի որ դա վրիպակ է...

բ. Նույն նպատակով նույն շրջանում նա Հաղբատում քահանայություն է անել տալիս ոմն «Տեր Մովսեսի». «Ավեր և անմարդաբնակ գյուղում 40 տարի ինչպե՞ս կարող էր ապրել Տեր Մովսեսը, ո՞վ էր խնամելու նրան և ո՞ւմ էր սպասարկելու նա» (էջ 102)։ Նախ՝ այսպիսի քահանա Հաղբատում երբեք չի եղել։ Այդպիսի բան չկա ոչ մի գրքում։ Ապա՝ Հաղբատ գյուղն ու Հաղբատի վանքը չի կարելի շփոթել իրար հետ։

գ. Ցույց չտալով կաթողիկոսական մի կոնդակի թվականը (բնագիրը տե՛ս «Դիվան հայոց պատմության», գիրք Դ, էջ 207), նա դրանից արտագրում է հետևյալ տողերը. «Թէ՝ չէն վանք ի յայդ միջոցսդ՝ Հախպատ է լեալ և Սանահին»,— և պնդում, որ Հաղբատը «1780-ական թթ. շեն» էր (էջ 103)։ Այստեղ խեղաթյուրված է իրողությունը, որովհետև կոնդակը գրված է 1781 թ. նոյեմբերի 9-ին, իսկ այդ տարի ո՞չ ոք Հաղբատի վանքը անմարդաբնակ չի համարել։

դ. Շ. Գրիգորյանը հավաստի ճշմարտություն է համարում Թաղիադյանի «Ճանապարհորդութիւն ի Հայս» գրքում հիշատակվող Տեր-Ստեփան քահանայի «ահա քառասուն ամք են, զի քահանայեմ աստ» արտահայտությունը (էջ 102, 106), մինչդեռ դա պարզ չափազանցություն է, վավերագրերով չհաստատված և Հաղբատի վանքի վիճակը պարզելու համար միանգամայն անարժեք. առօրյա չափազանցված խոսքը պաշտոնական փաստաթղթից գերադասելը սխալ է ու հակագիտական։

ե. Չհասկանալով՝ «Գրեցաք առ Հախպատու թեմականսն» արտահայտությունը, նա պնդում է, թե Հաղբատի վանքում 1780—1790-ական թթ. «հոգեվորականներ, սպասավորներ... կային» (էջ 106)։ Այդ բառերը վերցված են Ղուկաս կաթողիկոսի՝ 1792 թ. կոնդակից և վերաբերում են Գորու հայերին, աշխարհիկ մարդկանց, որոնք Հաղբատի թեմի ծխերից էին, իսկ վանքն ու Գորին իրարից շա՞տ էին հեռու[21]։

Հակասություններ ու անճշտություններ շատ կան Շ. Գրիգորյանի հոդվածի վերջաբանում։ Մոռանալով հոդվածի սկզբի իր իսկ հայտարարությունը, թե «մասնագետներից ո՞չ մեկը անվերապահորեն չի պնդել Սայաթ-Նովայի հաղբատաբնակ լինելը» (էջ 95), այստեղ նա գրում է. «... Երբ համարյա բոլոր սայաթնովագետները սկսած Ախվերդյանից, հայ-վրացական բազմաթիվ ու բազմապիսի աղբյուրներից քաղված նյութերի հիման վրա գտնում են,

21 Տե՛ս նույն տեղում, էջ 582։

որ Սայաթ-Նովան իր կյանքի վերջին տասնամյակներն անց է կացրել Հաղբատում, Պ. Հակոբյանը կասկածի տակ է առնում այդ իրողությունը» (էջ 107)։ Այս դեռ բոլորը չէ. նա միտումնավոր ձևով արժեքազրկում է հայկական աղբյուրները և դերադաս հռչակում միայն Հովհան արքայազնի «Կալմասոբան», որը, ինչպես ցույց է տալիս այդ երկի հանդամանալից հետազոտությունը, Սայաթ-Նովայի կյանքի հաղբատյան առեղծվածը և մահվան հանդամանքները պարզելու տեսակետից շոշափելի նյութ չի տալիս։ Այս նկատառումով էլ մենք ավելորդ ենք համարում Շ. Գրիգորյանի հոդվածի՝ այդ հարցին նվիրված մասին պատասխանելը։

Կարելի էր Շ. Գրիգորյանի հոդվածի մյուս սխալներն ու հակասություններն էլ ցույց տալ, բայց հարգենք ընթերցողին և կանգ առնենք։

Սայաթ-Նովայի կյանքի վերջին երեսուն տարիների ժամանակագրությունը, որի մասին խոսել էինք նաև մեր նախորդ հոդվածում, եղել է այսպիսին.

1. Թիֆլիսից հեռանալուց հետո (1759—1765 թթ. միջև), մինչև 1768 թ. Սայաթ-Նովան անցկացրել է Կախի ավանում, որպես դեղջուկ քահանա, Տեր-Ստեփան[ոս] անունով։

2. 1768—1778 (կեսեր), իբրև նույնանուն վեղարավոր վարդապետ, նա բնակվել է Տփղիսում և սպասավորել Հաղբատի թեմի առաջնորդարանում ու Բերդի կաթողիկե եկեղեցում։

3. 1778 (կեսեր)— 1784 թթ. այն տարիներն են, որոնց ընթացքում նա պետք է ապրեր Հաղբատի վանքում։

4. 1784—1795 թթ. ապրել է վերստին Թիֆլիսում, Հաղբատի վանքի մյուս միաբանների հետ։

5. 1795 թ. սեպտեմբերին նա սպանվել է Աղա-Մահմադ խանի հրոսակների ձեռքով։

ЕЩЕ РАЗ О ЖИЗНИ САЯТ-НОВЫ В АХПАТСКОМ МОНАСТЫРЕ

Доктор филологич. наук П. О. АКОПЯН

(Резюме)

Статья является ответом на полемические заметки Ш. Григоряна «Об ахпатском периоде жизни Саят-Новы» («Историко-филологический журнал», 1971, № 3), в которой автор пытается оспорить положения, высказанные в нашей статье «К вопросу о пребывании Саят-Новы в Ахпатском монастыре» (там же, 1969, № 3).

Вопреки общеизвестным фактам о нашествии лезгинов во второй половине XVIII в. в Грузию и Лорийскую область, в результате чего Ахпатский монастырь длительное время пребывал в полном запустении, Ш. Григорян настаивает на том, что Ахпатский монастырь жил в те годы полнокровной жизнью, и Саят-Нова с 70-х годов XVIII в. находился там. Однако приведенные им факты или неверны, или же представлены в искаженном виде. Так, например, Ш. Григорян сообщает, что в Ахпатском монастыре в 1751 г. якобы был похоронен архимандрит Петрос Шнохци, между тем как последний скончался в 1846 г., о чем свидетель-

ствует «Описание Ахпатского монастыря» (1886) Р. Ерзинкяна. В другом месте, ссылаясь на работу А. Ерицяна «Ахпатский монастырь» (1873), Ш. Григорян утверждает, что в 1766 г. Ахпат был вновь заселен. На самом же деле в 1766 г. католикос Симеон Ереванци решил упразднить Ахпатскую епархию именно потому, что монастырь долгое время не действовал.

В статье приведены и другие факты, показывающие, что Ахпатский монастырь во второй половине XVIII в., в период пребывания там опального поэта-инока Саят-Новы, функционировал лишь в 1778—1784 гг. До этого (1768 г.—май 1778 г.) и после (конец 1784 г.—сентябрь 1795 г.) Саят-Нова, вместе с другими братьями Ахпатского монастыря, жил в Тифлисе.